

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԾՐԱԳԻՐ

<<ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ -1>> ԴԱՍԸՆԹԱՑԻ

Շրջանավարտի որակավորումը (աստիճանը)՝ բակալավր

Կազմեցին՝ Իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր, **Գ.Ս. Ղազինյանը**,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ս.Ա. Դիլբանդյանը

Երևան 2021

1. Առարկայի նպատակն ու խնդիրները

1.1. «Քրեական դատավարություն» ուսումնական առարկայի նպատակը ուսանողների մեջ քրեական դատավարության բնագավառում գիտելիքներ, ունակություններ և հմտություններ ձևավորելն է, ինչն անհրաժեշտ է նորմաստեղծ, իրավակիրառ, իրավապահ, փորձագիտական-խորհրդատվական գործունեություն իրականացնելու համար:

1.2. Առաջադրված նպատակին կարելի է հասնել լուծելով հետևյալ խնդիրները.

1.2.1.Նորմաստեղծ գործունեության մեջ

-քրեադատավարական օրենսդրության և դրա գործնական կիրառման քննական վերլուծության հմտությունների ձևավորում, քրեադատավարական օրենսդրության կատարելագործման առաջարկների մշակում,

1.2.2. իրավակիրառ գործունեության մեջ

-պաշտոնական պարտականությունների շրջանակներում վարույթային որոշումներ կայացնելու և դրանք հիմնավորելու ու ապացուցողական և վարույթային գործողություններ կատարելու հմտությունների ձևավորում,

- վարույթային փաստաթղթեր կազմելու ունակությունների ձևավորում,

1.2.3.իրավապահ գործունեության մեջ

- քրեական դատավարության դերի, նշանակության և մեխանիզմների իմացություն օրինականության, իրավակարգի, անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովման ասպարեզում,

-հանցագործությունների կանխարգելման, կանխման, հայտնաբերման, բացահայտման և մինչդատական վարույթում և դատական վարույթներում քրեական գործերի քննության ու լուծման քրեադատավարական ձևերի հետազոտում:

1.2.4.փորձագիտական-խորհրդատվական գործունեության մեջ

- քրեադատավարական իրավունքի հարցերով խորհրդատվության, որպես փաստաբան, ներկայացուցիչ և պաշտպան հանդես գալու հմտությունների ձևավորում,

- քրեադատավարական փաստաթղթերի իրավական փորձաքննության հմտությունների, քրեադատավարական օրենքի խախտումները հայտնաբերելու, վերացնելու և հակազդելու ունակությունների ձևավորում:

2. Առարկայի տեղը օբյեկտիվ-կոդմոնոքոնոմային ծրագրավորման կառուցվածքում

2.1. «Քրեական դատավարություն» ուսումնական առարկան պարտադիր է, այն ուսումնական գործընթացի հենակետային, ընդհանուր մասնագիտական առարկաներից է, կրթական ստանդարտի տիպը՝ բակալավրիատի ուսումնական ծրագիր: Առարկան ուսումնասիրվում է 3-րդ և 4-րդ կուրսերում՝ 5-7 կիսամյակների ընթացքում:

2.2. Քրեական դատավարություն ուսումնասիրել սկսող ուսանողը պետք է տիրապետի գիտելիքների դատարանակազմության, հայրենական և արտասահմանյան պետության և իրավունքի պատմության, պետության և իրավունքի տեսության, ՀՀ-ի սահմանադրական իրավունքի ոլորտներից, ինչպես նաև նախնական գիտելիքների՝ վարչական, քաղաքացիական և քրեական իրավունքի ոլորտներից: Նա պետք է պատկերացնի պետության և իրավունքի բնույթն ու էությունը, պետության և իրավունքի ծագման, գործառման և զարգացման հիմնական օրինաչափությունները, պետության և իրավունքի պատմական տիպերն ու ձևերը, դրանց էությունն ու գործառույթները, պետության մեխանիզմը, իրավունքի համակարգը, իրավական կարգավորման մեխանիզմներն ու միջոցները, իրավունքի իրացումը, ՀՀ պետական և իրավական զարգացման առանձնահատկությունները, պետության և իրավունքի դերը հասարակության քաղաքական համակարգում, հասարակական կյանքում, ՀՀ սահմանադրական կարգի յուրահատկությունները:

Ուսանողը պետք է պատկերացում ունենա դատական իշխանության հասկացության, հատկանիշների, սկզբունքների և իրավական հիմքերի, դատարանի և նրա օժանդակ մարմինների՝ դատախազության, քննչական մարմինների, հետաքննության մարմինների, փաստաբանության կազմակերպման և գործունեության իրավական հիմքերը, դրանց գործառույթներն ու հիմնական լիազորությունները:

Ուսանողը պետք է ունենա հետևյալ իրավասությունները.

-համընդհանուր-գիտական.

- փիլիսոփայական հիմնախնդիրներ վերլուծելու և գնահատելու ունակություն սոցիալական և մասնագիտական խնդիրներ լուծելիս,

- մասնագիտական ոլորտում գիտական հետազոտությունների մեթոդաբանության տիրապետում,

-գործիքային.

- համակարգչային ցանցերում ծրագրային միջոցների կիրառման ու աշխատանքի, համացանցի ռեսուրսների օգտագործման հմտությունների տիրապետում, տեղեկատվություն ստանալու, պահելու, մշակելու հիմնական մեթոդների, ձևերի ու միջոցների տիրապետում,

- գիտահետազոտական աշխատանքում ժամանակակից հաշվողական տեխնիկա և մասնագիտացված ծրագրային ապահովում կիրառելու ունակություն,

- տեղեկատու իրավական համակարգերի, էլեկտրոնային գրադարանային ռեսուրսների հմտություններին վստահ տիրապետում:

3. Առարկայի յուրացման արդյունքներին առաջադրվող պահանջները

3.1. Առարկայի ուսումնասիրման գործընթացն ուղղված է հետևյալ հմտությունների ձևավորմանը.

-հիմնական իրավաբանական հասկացությունների, իրավաբանական տեքստի ընկալման հմտությունների տիրապետում, նորմատիվ-իրավական փաստաթղթերի մասնագիտական գործունեության մեջ կիրառելու ունակություն,

Մասնագիտական հմտություններ.

նորմաստեղծ գործունեության մեջ.

-նորմատիվ-իրավական ակտեր մշակելու ունակություն՝ համաձայն սեփական մասնագիտական գործունեության մասնագիտացման,

իրավակիրառ գործունեության մեջ

-մասնագիտական գործունեություն ծավալելու կարողություն՝ զարգացած իրավագիտակցության, իրավական մտածողության և իրավական մշակույթի հիման վրա,

- օրենքին համապատասխան որոշումներ ընդունելու և իրավաբանական գործողություններ կատարելու ունակություն,

- նորմատիվ-իրավական ակտերը կիրառելու, նյութական և դատավարական իրավունքի նորմերը մասնագիտական գործունեության մեջ օգտագործելու ունակություն,

- փաստերն ու հանգամանքները իրավաբանորեն ճիշտ որակելու ունակություն, Դատավարության լեզվի (հասկացությունների) տիրապետում, իրավաբանական փաստաթղթերը որակյալ վերլուծելու ունակություն,

իրավապահ գործունեության մեջ

- օրինականությունն ու իրավակարգը, անձի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն ապահովելու ունակություն,

- անձի պատիվն ու արժանապատվությունը, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու ու հարգելու ունակություն,

- հանցագործություններն ու այլ իրավախախտումներ հայտնաբերելու, կանխելու, բացահայտելու և քննելու ունակություն,

- իրավախախտումները կանխարգելել կարողանալու, դրանք կատարելուն նպաստող պատճառներն ու պայմանները պարզելու ու վերացնելու ունակություն,

- կոռուպցիոն վարքագիծը հայտնաբերելու, գնահատելու և այն կանխելուն օժանդակելու ունակություն,

- մասնագիտական գործունեության արդյունքները իրավաբանական և այլ փաստաթղթերում ճիշտ և լրիվ արտացոլելու ունակություն,

փորձագիտական-խորհրդատվական գործունեության մեջ.

- նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի իրավաբանական փորձաքննության անցկացմանը մասնակցելու պատրաստակամություն, այդ թվում՝ նպատակ ունենալով դրանցում պարզել այնպիսի դրույթների գոյությունը, որոնք օժանդակում են կոռուպցիայի դրսևորման համար պայմաններ ստեղծելուն,

- իրավական տարատեսակ ակտեր մեկնաբանելու ունակություն,

- որակյալ իրավաբանական եզրակացություններ կազմելու և խորհրդատվություն տալու ունակություն քրեական վարույթի շրջանակներում:

3.2. Առարկան ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պարտավոր է.

3.2.1. Իմանալ՝

քրեական դատավարության հիմնական դրույթները, քրեական դատավարությունում հիմնական հասկացությունների, կատեգորիաների,

ինստիտուտների, մասնակիցների իրավական վիճակների էությունն ու բովանդակությունը:

3.2.2. կարողանալ՝

գործածել քրեադատավարական հասկացություններն ու կատեգորիաները, վերլուծել իրավաբանական փաստերը և դրանց առնչությամբ ծագող քրեադատավարական իրավահարաբերությունները, վերլուծել, մեկնաբանել և ճիշտ կիրառել քրեադատավարական նորմերը, կայացնել որոշումներ և կատարել վարույթային գործողություններ քրեադատավարական օրենքին համապատասխան, իրականացնել նորմատիվ-իրավական ակտերի իրավական փորձաքննություն քրեական դատավարության բնագավառում, տալ որակյալ իրավաբանական եզրակացություններ ու խորհրդատվություն, ճիշտ կազմել ու ձևակերպել քրեադատավարական փաստաթղթերը:

3.2.3. տիրապետել՝

քրեադատավարական տերմինաբանությանը, իրավական ակտերի հետ աշխատելու հմտություններին, տարբեր իրավական երևույթների, իրավաբանական փաստերի, իրավական նորմերի և իրավահարաբերությունների վերլուծությանը քրեական դատավարության բնագավառում, իրավակիրառ ու իրավապահ պրակտիկայի վերլուծությանը, իրավական խնդիրների և կոլիզիաների լուծմանը, քրեադատավարական իրավունքի նորմերի իրացմանը, մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելուն:

4. Առարկայի բովանդակությունը

4.1. Առարկայի բաժինների բովանդակությունը

4.1.1. Քրեական դատավարության հասկացությունն ու էությունը

Քրեական դատավարության հասկացությունը: Քրեական դատավարության էությունը: Քրեական դատավարությունը և արդարադատությունը. դատական իշխանության անկախությունը: Քրեական դատավարության նպատակները ու նշանակությունը:

4.1.2. Քրեական դատավարության հիմնական հասկացությունները

Քրեական դատավարության փուլերը: Քրեական դատավարության կառուցվածքի, փուլերի ընդհանուր բնութագիրը. հասկացությունը, համակարգը, նպատակները, հաջորդականությունը և դասակարգումը:

4.1.3. Քրեական վարույթը. քրեական վարույթի հասկացությունը, քրեական վարույթի ամրագրումը, քրեական վարույթն իրականացնող անձը, վարույթային գործողություններ, վարույթային որոշումներ, դատավարական ակտի հատկանիշները և պարտադիրությունը, առանձին հանձնարարություններ, միջնորդություն և բողոքներ, քրեական վարույթի սահմանները, քրեական վարույթի սահմանների ընդլայնման և նեղացման տեխնիկան:

4.1.4. Քրեադատավարական գործառույթներ: Քրեադատավարական գործառույթների դասակարգման չափանիշները: Քրեադատավարական գործառույթների տարանջատումը իշխանությունների բաժանման տեսանկյունից՝ դատարան, քննչական մարմիններ, դատախազություն, հետաքննության մարմին: Քրեադատավարական գործառույթների սահմանազատումը մրցակցության տեսանկյունից՝ մեղադրանք, պաշտպանություն, գործի լուծում:

Քրեադատավարական ձևը:

4.1.5. Քրեական հետապնդումը: Քրեական հետապնդման հասկացությունը: Քրեական հետապնդման հարուցումը: Քրեական հետապնդման պարտադիրությունը և նպատակահարմարությունը: Քրեական հետապնդման տեսակները: Քրեաիրավական հաշտարարության հասկացությունը:

4.2.1. Քրեական դատավարության պատմական ձևերը (մոդելները, տիպերը)

Քրեական դատավարության պատմական ձևերի (մոդելների, տիպերի) հասկացությունը և դրա նշանակությունը քրեադատավարական գիտության մեջ: Քրեական դատավարության պատմական ձևերի (մոդելների, տիպերի) առանձնացման չափանիշները: Մեղադրողական-մրցակցային քրեական դատավարությունը և դրա ժամանակակից արտահայտությունը (դատավարության անգլոսաքսոնական մոդելը): Պատժողական (հետախուզական) քրեական դատավարությունը և դրա պատմական նշանակությունը: Խառը քրեական

դատավարությունը և դրա ժամանակակից արտահայտությունը (դատավարության կոնտինենտալ մոդելը):

4.3.1. Քրեական դատավարության հիմնական մոդելները և աշխարհի ժամանակակից քրեական դատավարության քարտեզը

Ժամանակակից քրեական դատավարության զարգացումը Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում: Քրեական դատավարության արևմտյան մոդելների գաղափարախոսական մերձեցումը: Քրեական դատավարության արևմտյան մոդելների տեխնիկական բազմազանությունը: Քրեական դատավարության արևմտյան մոդելների աշխարհաքաղաքական մրցակցությունը:

Քրեական դատավարության ժամանակակից զարգացումները աշխարհի այլ երկրներում ու տարածաշրջաններում:

4.4.1. Քրեադատավարական իրավունքի աղբյուրները:

Քրեադատավարական իրավունքի աղբյուրները. հասկացությունը, տեսակները, համակարգը և ընդհանուր բնութագիրը:

ՀՀ Սահմանադրությունը որպես քրեադատավարական իրավունքի աղբյուր: ՀՀ քրեական դատավարության սահմանադրականացումը և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները:

Միջազգային իրավունքի նորմերը և դրանց դերը քրեական դատավարության կարգավորումներում: Քրեական դատավարության միջազգայնացումը և միջազգային իրավունքի համընդհանրական ճանաչում գտած սկզբունքները (նորմերը): Մարդու իրավունքների ու ազատությունների մասին հիմնական կոնվենցիաները: Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դերը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներն ու դրանց տեղայնացումը հայաստանյան քրեական դատավարությունում: Հայաստանի Հանրապետության բազմակողմ և երկկողմ պայմանագրերը քրեական արդարադատության ոլորտում:

Քրեադատավարական օրենսդրությունը: Քրեադատավարական իրավունքի այլ աղբյուրներ: ՀՀ վճարեկ դատարանի որոշումները: Դատական նախադեպային որոշումները:

Քրեադատավարական նորմերը և դրանց մեկնաբանությունները:

Քրեադատավարական նորմերի գործողությունը ժամանակի և տարածության մեջ և անձանց շրջանակի:

5.1. Քրեական դատավարության սկզբունքները

5.1.1. Քրեական դատավարության սկզբունքների հասկացությունն ու իրավաբանական նշանակությունը: Քրեական դատավարության սկզբունքների դասակարգման չափանիշները: Քրեական դատավարության սկզբունքների համակարգը:

5.1.2. Հանրայնության սկզբունքը քրեադատավարական գործունեության մեջ: Դատական պաշտպանության ապահովումը: Արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից: Բոլորի հավասարությունը օրենքի առջև: Անձի ազատությունը և անձեռնմխելիությունը: Իրավաբանական օգնության ապահովումը: Անմեղության կանխավարկածը: Կողմերի հավասարությունը և մրցակցությունը: Պատշաճ ապացուցումը: Վարույթի ողջամիտ ժամկետը: Կրկին դատավերու անթույլատրելիությունը: Մասնավորչ և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Վարույթի լեզուն: Դատական վարույթի հրապարակայնությունը: Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը:

6.1. Քրեական դատավարության մասնակիցները

6.1.1. Քրեական դատավարության մասնակիցների հասկացությունն ու դասակարգումը:

6.1.2. Քրեական դատավարությունում իշխանական լիազորություններ իրականացնող պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք: Դատարանը որպես քրեական վարույթի մասնակից: Դատարանի իրավասությունը:

6.1.3. Վարույթի հանրային մասնակիցների ընդհանուր բնութագիրը: Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը: Վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները:

6.1.4. Դատախազը որպես քրեական դատավարության մասնակից: Վերադաս դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում: Հսկող դատախազի

լիազորությունները մինչդասական վարույթում: Դատախազի լիազորությունները դասական վարույթի ընթացքում:

6.1.5. Քննիչը և քննչական մարմնի ղեկավարը:

Հետաքննության մարմինը, հետաքննիչը և հետաքննության մարմնի ղեկավարը:

6.2.1 Քրեական վարույթի մասնավոր մասնակիցները:

6.2.1. Մեղադրյալի իրավական վիճակը: Մեղադրյալի օրինական ներկայացուցչի իրավունքներն ու պարտականությունները:

6.2.2. Պաշտպանը, նրա իրավունքներն ու պարտականությունները: Պաշտպանի մասնակցության եղանակները, պաշտպանից հրաժարվելը:

6.2.3. Տուժողի իրավական վիճակը քրեական վարույթում: Տուժողի օրինական ներկայացուցիչը: Մահացած տուժողի կամ տուժող ճանաչվելու ենթակա անձի փոխարեն տուժող ճանաչելը: Տուժողը՝ որպես մասնավոր մեղադրող: Տուժողի լիազոր ներկայացուցիչը:

6.2.4. Գույքային պատասխանողը քրեական վարույթում: Գույքային պատասխանողի ներկայացուցիչը:

6.3.1. Քրեական վարույթին օժանդակող անձինք: Այդ կատեգորիայի մասնակիցներին դասվող անձանց շրջանակը, նրանց դերակատարման ընդհանուր բնութագիրը քրեական վարույթում:

6.4.2. Քրեական դատավարությանը մասնակցությունը բացառող հանգամանքները: Քրեական դատավարության որոշակի մասնակիցների բացարկի հիմքերը:

6.5.1. Վարույթին ներգրավված անձնաց հատուկ պաշտպանությունը: Հատուկ պաշտպանության միջոց կիրառելու հիմքը և կարգը: Հատուկ պաշտպանության միջոցները: Դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

7.1. Ապացույցների և ապացուցման մասին ընդհանուր դրույթները

7.1.1. Ապացուցողական իրավունքի դատավարական նշանակությունն ու դրա համակարգը: Հիմնական ապացուցողական տեսությունները. ֆորմալ ապացույցների տեսությունը, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատման տեսությունը, ապացույցների անգլոսաքսոնական տեսությունը:

Քրեադատավարական ապացույցի հասկացությունը:

Ապացուցման նպատակը և օբյեկտիվ ճշմարտության մասին ուսմունքը:

Քրեադատավարական ապացույցների հատկանիշները: Ապացույցների վերաբերելիությունը: Ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները: Ապացույցների արժանահավատությունը:

Ապացույցների դասակարգումը:

7.1.2. Ապացուցման գործընթացն ու նրա տարրերը: Ապացուցման ենթակա հանգամանքները: Որոշակի ապացույցներով հաստատվող հանգամանքները:

Քրեական գործով ապացուցման սահմանները և ապացույցների բավարար լինելու մասին ուսմունքը: Փաստերի իրավական կանխավարկածը:

Ապացուցման սուբյեկտները և ապացուցման պարտականությունը: Ապացուցման բեռը և անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Ապացույցներ հավաքելը: Ապացույցների ստուգումը (հետազոտումը): Ապացույցների գնահատումը:

7.1.3. Ապացույցների առանձին տեսակները

Ապացույցների տեսակների սպառիչ ցանկը: Ձերբակալվածի և մեղադրյալի ցուցմունքները: Տուժողի ու վկայի ցուցմունքները: Փորձագետի եզրակացությունն ու ցուցմունքները: Փորձագետի կարծիքը: Իրեղեն ապացույցները: Ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները: Արտավարույթային փաստաթղթերը:

Օպերատիվ-հետախուզական եղանակով ստացված տվյալների դատավարական նշանակությունը: Գաղտնի քննչական գործողությունների արդյունքում ստացված տվյալների ապացուցողականությունը:

8.1. Քրեադատավարական հարկադրանքի միջոցները

8.1.1. Քրեադատավարական հարկադրանքի միջոցների հասկացությունն ու դասակարգումը:

8.1.2. *Ձերբակալման հասկացությունը և նշանակությունը: Ձերբակալման տեսակները և ժամկետները:*

Ձերբակալումը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված անձի իրավունքները, պարտականությունները, դրանց իրականացման պայմաններն ու երաշխիքները:

Ձերբակալումը ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար:

Խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի ձերբակալումը:

Ձերբակալված օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի լրացուցիչ իրավունքները: Ձերբակալվածին ազատելը:

8.2.1. Խափանման միջոցները

8.2.1. Խափանման միջոցների հասկացությունն ու դասակարգումը: Խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը: Խափանման միջոցների տեսակներն ու դրանք կիրառելու դատավարական կարգը: Խափանման միջոց փոխելը կամ վերացնելը:

8.2.2. Կալանքի իրավաչափության առանձնահատկությունները: Կալանքի ժամկետը: Կալանքից ազատելը: Կալանքից ազատված անձին կրկին կալանավորելը:

8.2.3. Այլընտրանքային խափանման միջոցների հասկացությունը և տեսակները: Այլընտրանքային խափանման միջոցների իրավաչափության առանձնահատկությունները: Տնային կալանքը: Վարչական հսկողությունը: Գրավը պաշտոնավարման կասեցումը: Բացակայելու արգելքը: Երաշխավորությունը: Դատտիարակչական հսկողությունը: Զինվորական հսկողությունը:

8.3. Գույքի արգելադրումը

8.3.1. Գույքի արգելադրման հասկացությունը և նշանակությունը: Գույքի արգելադրման նպատակը և հիմքերը: Արգելադրման ենթակա գույքը: Գույքի արգելադրման կարգը: Արգելադրված գույքի պահպանությունը և սևողությունը:

8.4. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները

8.4.1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցների տեսակները: Փորձաքննություն կատարելու համար

**բժշկական հաստատությունում տեղավորելը: Անվտանգության միջոցների տեսակները՝
ընտանեկան հսկողություն: Բժշկական հսկողությունը:**

8.5. Դատավարական սանկցիաները

7.5.1. Դատավարական սանկցիաների էությունը և նշանակությունը: Դատավարական սանկցիաների կիրառման հիմքերը և տեսակները: Նկատողությունը: Իրավունքի իրականացման սահմանափակումը: Դատական նիստի դահլիճից հեռացնելը: Վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը: Դատական տուգանքը: Վարույթից հեռացնելը:

9.1. Պարզաբանումները և ծանուցումները

9.1.1. Իրավունքների և պարտականությունների պարզաբանումը:

9.1.2. Ծանուցման եղանակները: Ծանուցագիրը և դրա բովանդակությունը: Ծանուցագիրը հանձնելը: Ծանուցման պատշաճությունը:

10.1. Միջնորդությունները և բողոքները

10.1.1. Միջնորդության հարուցումը և լուծումը: Վարույթի մասնակից ճանաչելու միջնորդությունը:

10.1.2. Բողոքարկումը:

11.1. Գույքային հայցը և ռեաբիլիտացիան

11.1.1. Գույքային հայցի հասկացությունն ու իրավաբանական բնույթը քրեական վարույթում. միացյալ դատավարության տեսությունը: Գույքային հայցի հիմքերն ու առարկան քրեական վարույթում: Գույքային հայցի ընդդատությունը: Քաղաքացիական հայցի հարուցումը և լուծումը: Գույքային հայցից հրաժարվելը: Անձին որպես գույքային պատասխանող ներգրավելը:

11.1.2. Ռեաբիլիտացիայի էությունը և նշանակությունը: Արդարացված մեղադրյալի ռեաբիլիտացիան:

12.1. Վարձատրությունը, ծախսերը և հատուցումը:

12.1.1. Փաստաբանի, փորձագետի և թարգմանչի վարձատրությունը: Վարույթին ներգրավված անձանց ծախսերը և դրանց հատուցումը: Վարույթային ծախսերը և դրանց հատուցումը:

12.1. Գաղտնիության պահպանումը:

12.1.1. Գաղտնիության պահպանման էությունը և նշանակությունը քրեական վարույթում: Գաղտնիության պահպանման սահմանադրական հիմքերը: Քրեական վարույթում գաղտնիությունը պահպանվող արժեքների տեսակները: Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանումը: Պետական գաղտնիքի պահպանումը: Բանկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանումը:

13.1. Ժամկետները

13.1.1. Ժամկետները որպես վարույթի իրականացման երաշխիք: Ժամկետի հաշվումը: Ժամկետը բաց թողնելու հետևանքները և դրա վերականգնման կարգը:

Գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015,
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 2021թ.,
3. <<ՀՀ Դատական օրենսգիրք>> սահմանադրական օրենք, 2018,
4. <<Փաստաբանության մասին>> ՀՀ օրենք, 2004,
5. <<Դատախազության մասին>> ՀՀ օրենք, 2017,
6. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ,
7. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ,
8. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս: ԵՊՀ հրատ., Երևան, 2019թ.:
9. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, չ. 3, Երևան, 2017:
10. Ղազինյան Գ.Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում, Երևան, 2001թ.,
11. Դիլբանդյան Ս.Ա. Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը քրեական դատավարության մինչդատական վարույթում, Երևան, 2011,
12. Մելիքյան Ռ. Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Երևան, 2007թ.:
13. Հովհաննիսյան Ա. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմնահարցերը քրեական դատավարությունում, Երևան, 2018թ.:
14. Սուջյան Տ. Վճռաբեկությունը որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում, Երևան, 2017թ.:
15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014թ.:
16. <<Պետություն և իրավունք>> ամսագիր, թիվ 2/90/, 2021թ.:

Ծանոթություն. դասավանդողի որոշմամբ, հաշվի առնելով ուսանողի կատարած գործնական առաջադրանքների գնահատականը և իրավասությունը ստուգելու նպատակով, թույլատրվում է քննական տոմսի հարցին պատասխանելու սահմաններում լուծել խնդիրներ, որոնք առնչվում են իր գործնական աշխատանքին:

Մեթոդական ցուցումներ ուսումնական քրեական գործի հետ աշխատանքի վերաբերյալ

Առաջին հերթին, հարկավոր է բացատրել ուսանողներին, որ նշյալ գործն իրական է, բայց հատուկ լրացված է դատավարական սխալներով: Նպատակահարմար է ուսանողներին ներկայացնել գործին կցված սխալների տեսակները (գործի մասնակից անձանց դատավարական վիճակի ոչ ճիշտ սահմանումը, գործի մասնակից անձանց իրավունքների խախտումները, ապացուցողական և այլ բնույթի վարույթային գործողությունների ժամանակ թույլ տրված սխալները, սխալ վարույթային որոշումները, դատավարական փաստաթղթերը լրացնելիս թույլ տրված սխալները, հավաքված ապացույցների գնահատման սխալները, անհրաժեշտ դատավարական գործողությունների ու որոշումների բացակայությունը, պաշտպանի գործած սխալները, քրեադատավարական տերմինները ոչ ճիշտ կիրառելը, ՀՀ ՔԴՕ-ի հոդվածների համարները սխալ նշելը: Միայն հայտնաբերելիս հարկավոր է առանձին տետրում նշել խախտված իրավական նորմը, նշել տվյալ սխալի հետևանքները, ինչպես նաև շտկել սխալը: Եթե դատավարական փաստաթուղթը պարունակում է մեծ թվով սխալներ, նպատակահարմար է նորից կազմել այն: Անհրաժեշտ է նաև ուսանողների ուշադրությունը հրավիրել այն բանին, որ նման մեղադրանքից ապահովագրված չէ ոչ ոք: Այսպիսի մեկնակերպը թույլ է տալիս գրավել ուսանողների ուշադրությունը գործի նկատմամբ և սեմինարների ու խաղային դատավարության ժամանակ ստեղծել լուրջ տրամադրվածություն:

Ուսումնական քրեական գործի հետազոտումը նպատակահարմար է սկսել քրեական դատավարության ուսուցման երկրորդ կիսամյակից, այսինքն՝ հատուկ մասի ուսումնասիրությունը սկսելու պահից:

Պայմանականորեն գործը կարելի է բաժանել երեք մասի.

ա) վարույթ նախաձեռնելուց,

բ) նախաքննություն,

զ) դատական նախնական լսումներ,

դ) դատաքննություն,

ե) վերաքննիչ ատյան,

զ) դատավճռի իրականացում:

Ընդ որում «Դատաքննություն. ընդհանուր պայմաններ», «նախնական դատական լսումներ, դատաքննություն, կողմերի վիճաբանությունը և մեղադրյալի եզրափակիչ խոսքը» թեմաներով տեսական դրույթների քննարկումից և բոլոր առաջադրանքների լուծումից հետո կազմակերպվում է խաղային դատավարություն (անհրաժեշտ է բաշխել դերերը, այլապես դատավարությունը կարող է ընթանալ այլ կերպ, հարկավոր է հիշեցնել ուսանողներին, որ դատավարության գործող անձինք իրական են՝ անլուրջ վերաբերմունքը բացառելու նպատակով), դատաքննության ընթացքում ուսանողներն արձանագրում են սխալները: Դատավարության ավարտին քննարկվում են սխալները և վերլուծվում են:

«Դատաքննություն, դատավճռի կայացում» թեմայով առաջադրվում է կազմել դատավճիռ: Ուսանողները կազմում են դատավճիռ, յուրաքանչյուրը նշելով, թե ինքն ինչպիսի դատավճիռ կկայացնեն որպես խաղային դատավարության դատավոր:

«Վարույթը երկրորդ ատյանի դատարանում» թեմայով կարելի է հանձնարարել արդարացման դատավճիռ կայացրած ուսանողներին կազմել բողոքներ կամ նկատառումներ իրենց դասընկերների մեղադրական դատավճիռների առնչությամբ և հակառակը:

Ստուգարքի կամ քննության ժամանակ նպատակահարմար է ստուգել ուսանողի մոտ գործի վերաբերյալ տեսրի առկայությունը: